ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամի» ապրանքների ներկրման և արտահանման կազմակերպման և ֆինանսական միջոցների ներգրավման վերաբերյալ

«Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամը» (այսուհետ՝ Հիմնադրամ), իրականացնում է իր գործունեությունը ՀՀ կառավարության և մի շարք ՀՀ մարզերի մարզպետների աջակցության ներքո, ունի չինական ընկերությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների և կառավարական հաստատությունների հետ աշխատանքի բազմամյա փորձ:

Չինաստանն այսօրվա դրությամբ հանդիսանում է բիզնեսի համար ամենատարածված և ֆինանսապես հրապուրիչ ուղղություններից մեկը՝ ինչպես մեծ ընկերությունների, այնպես էլ փոքր և միջին ձեռնարկությունների համար: Այս պատճառով, մենք ձգտում ենք անել ամեն հնարավորը, որ մեր հաճախորդների պատվիրած ֆինանսական ծառայությունները և ապրանքները լինեն մրցունակ:

«Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամը»՝

- ✓ **Տրամադրում է** չինական կառավարական լիազոր մարմինների կողմից տրված արտոնություններ՝ հայկական արտադրողների կողմից ապրանքների մատակարարման համար:
- ✓ **Ընդունում է** պատվերներ՝ Չինաստանից լայն շրջանակի ապրանքա-նյութական արժեքների մատակարարման համար, և հանդես է գալիս որպես ներկրող-օպերատոր՝ ձևակերպելով ուղեկցող բոլոր փաստաթղթերը:
- ✓ Հաճախորդի համար ստեղծում է բանկային գրավադրման գործիքներ՝ վարկ ստանալու նպատակով:
- ✓ **Ներգրավում է** ֆինանսավորում ազգային արժույթներով՝ RMB (չինական յուան) և AMD (հայկական դրամ):
- ✓ **Սահմանում է** Չինաստանից ապրանքի մատակարարման գինը ՀՀ ազգային արժույթով (AMD)՝ առանց կապելու յուանի կամ դոլարի փոխարժեքի հետ (դեպի ՀՀ արտահանման դեպքում):
- ✓ **Տրամադրում է** ազգային արժույթով (AMD-RMB) ապրանքների մատակարարման համար բանկային երաշխիքներ՝ հաճախորդին ապրանքների մատակարարման փաստով վճարման սկզբունքով և հաճախորդի անունով «Ամերիաբանկում» բացված հաշվին մատակարարվող ապրանքի գնի 30%-ը մուտքագրելու պայմանով:
- ✓ **Ապահովում է** Չինաստանից մատակարարվող ապրանքի դիմաց վճարումը ՀՀ ազգային արժույթով (AMD)՝ «Ամերիաբանկի» միջոցով (հայկական ընկերության կողմից ներկրման

դեպքում);

- ✓ **Կազմակերպում է** միջազգային լոգիստիկան, որի շնորհիվ Չինաստանից որևէ ապրանքի մեծածախ մատակարարումները կատարվում են հնարավորինս սեղմ ժամկետներում:

Չինաստանից մեծածախ ապրանքի մատակարարման դեպքում, մենք փոխանցում ենք ապրանքը հաճախորդին հաճախորդի տարածքում՝ ամբողջ ուղեկցող փաստաթղթերի հետ միասին, որոնք կազմված են լինելու գործող օրենսդրությանը համաձայն:

<u>Տարբեր տեսակի ապրանքների, արտադրատեսակների և ծառայությունների ներկրումն ու արտահանումը մեծացնելու համար Հիմնադրամը տրամադրում է՝</u>

- ✓ Հայկական արտադրողների մասնակցության **կազմակերպում** Չինաստանում տեղի ունեցող միջազգային ցուցահանդեսներին:
- ✓ Հայկական մարզերի համար Չինաստանի տարածքում «Առևտրի Տների» **ստեղծում և** բացում, ինչպես նաև չինական գավառների համար՝ Հայաստանի տարածքում:
- ✓ **Ներգրավում է** ֆինանսավորում Հայաստանի և Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Մաքսային միության (ԵվրԱզԷս ՄՄ) անդամ պետությունների տարածքում մաքսային-լոգիստիկ կենտրոնների ստեղծման համար:

<u>Հիմնադրամը նախապատրաստել է նպաստավոր միջավայր արտասահմանյան ներդրումներ ներգրավելու համար՝</u>

- ✓ Հայաստանի տարածքում լայն պրոֆիլի համատեղ ձեռնարկությունների **ստեղծում՝** Չինաստանից և այլ երկրներից ֆինանսավորման ներգրավմամբ:
- ✓ Արտասահմանյան ներդրողների համար լրացուցիչ արտոնությունների **տրամադրում**:
- ✓ Նոր տեխնոլոգիաների ներդրման համար ֆինանսավորման **ներգրավում**:
- ✓ Բնակելի տների կառուցման համար (առավելապես Երևանում) ֆինանսավորման **ներգրավում՝** անհրաժեշտ ապրանքների մատակարարմամբ:
- ✓ Բնական ռեսուրսների (բազալտ, պերլիտ, բենտոնիտ և այլն) արդյունահանման և մշակման գործարանների ստեղծման նպատակով ֆինանսավորման **ներգրավում**:
- ✓ ՀՀ տարածքում տեխնոպարկերի **ստեղծում**:
- ✓ Պետական նշանակության ծրագրերի իրականացման համար ֆինանսավորման **ներգրավում՝** առանց պետական երաշխիքների տրամադրման և առանց պետության կողմից պարտավորությունների:

<u>Հիմնադրամի ներկրման և արտահանման, առևտրա-ֆինանսական ստորաբաժանումը Չինաստանում, «Jiangsu GeFan Technology Trade Co., Ltd.» ընկերությունը</u>

«Չին-հայկական հարաբերությունների տարածաշրջանային զարգացման հիմնադրամը» հանդիսանում է միակ հայկական կազմակերպությունը, որն ունի իր ներկրման և արտահանման, առևտրա-ֆինանսական ստորաբաժանումը Չինաստանում, ի դեմս «Jiangsu GeFan Technology Trade Co., Ltd» (այսուհետ՝ «GeFan») ընկերության (www.gefangroup.com): Ընկերության հիմնական գրասենյակը գտնվում է Նանկին քաղաքում, իսկ դրա ներկայացուցչությունները՝ Ֆոշան քաղաքում և Հայնան գավառում:

«GeFan»-ը ունի անհրաժեշտ լիցենզիաները՝ լիարժեք ֆինանսա-տնտեսական գործունեություն վարելու համար, ներառյալ ներկրման և արտահանման, ներդրումներ ներգրավելու լիցենզիաները և այլն: Ընկերությունն ունի համագործակցության համաձայնագրեր չինական խոշորագույն արտադրողների, բանկերի, «SinoSure» ապահովագրական ընկերության հետ, որը հանդիսանում է արտահանում ֆինանսավորող վարկային գործակալություն՝ վարկերի ապահովագրման աշխարհում միակ ընկերությունը, ամենամեծ պետական ապահովագրական ընկերությունը, որն անմիջականորեն ենթարկվում է Չինաստանի ֆինանսների նախարարությանը:

Կրճատելով հաճախորդների ծախսերը՝ մենք մեզ վրա ենք վերցնում գործարքների սպասարկումը և վերահսկումը, որի թվում են՝

- ✓ **Որոնել** որոշակի ապրանքներ և ծառայություններ արտադրողներին, մատակարարներին կամ գնորդներին, ինչպես նաև բիզնեսի համար գործընկերներին Չինաստանում:
- ✓ **Ներգրավել** արտոնյալ պայմաններով ֆինանսավորում չինական ազգային արժույթով RMB (չինական յուան) 7-10 տարի ժամկետով՝ Հիմնադրամի կողմից առաջարկվող դասական գրավային մեխանիզմների օգտագործմամբ: Վարկերի ֆինանսավորումը և ապահովագրումն իրականացվում է «GeFan» ընկերության միջոցով կամ ուղղակի չինական բանկերի կողմից՝ ապահովագրելով վարկի վերադարձելիությունը «SinoSure» ընկերությունում:
- ✓ **Ստուգել** չինական գործընկերների վստահելիությունը:
- ✓ **Վարել** նախնական կամ ընթացիկ բանակցություններ չինական ընկերությունների հետ գործարքներ իրականացնելիս, այդ թվում՝ օնլայն ռեժիմով համացանցի միջոցով:
- ✓ **Խորհրդատվություն և օգնություն** բանակցությունների իրականացման բոլոր փուլերում, պայմանագրերի կնքման ժամանակ, ինչպես նաև ձեռքբերումների, մատակարարումների և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնելու ժամանակ:
- ✓ **Ձեռք բերել և ուղարկել** ապրանքա-նյութական արժեքներ Չինաստանից Հայաստան և այլ

երկրներ, և հակառակը:

- ✓ **Բեռի տեղափոխում** Չինաստանի տարածքով, պահպահում և հավաքագրում չինական պահեստներում, մաքսային ձևակերպումների իրականացում և ապրանքի ուղարկում Հայաստան, Ռուսաստան, Ղազախստան և Մաքսային միության կամ ԱՊՀ անդամ երկրներ կամ այլ երկրներ:
- ✓ **Առաջարկել** չինական լիզինգային ընկերությունների ծառայությունները՝ տեխնիկայի, սարքավորումների և այլ ապրանքների ձեռքբերման համար:
- ✓ **Ձևակերպել և հավաքագրել** տրանսպորտային, մաքսային և ապրանքին, գործարքին և արտադրողին վերաբերող այլ անհրաժեշտ փաստաթղթեր:
- ✓ **Վերահսկել** ապրանքի որակը արտադրության ընթացքում և ապրանքն ընդունելու և բեռնելու ժամանակ, այդ թվում՝ լաբորատոր ստուգումների և անալիզների անցկացում:
- ✓ **Ապահովել բիզնես-ուղեկցում** պատվիրատուի պատվիրակության համար Չինաստանում, մասնակցել բանակցություններին, այդ թվում՝ թարգմանիչների ապահովման եղանակով:
- ✓ **Պահպանել** հայկական ընկերությունների և դրանց արտադրանքի շահերը Չինաստանում:

Հանդիսանալով ներկրման և արտահանման լիցենզիայի կրող՝ Չինաստանում մեր ստորաբաժանումը կստանձնի արտահանողի և ներկրողի գործառույթները:

Այս բոլոր գործառույթներն իրականացնում է մեր չինական ստորաբաժանումը՝ ինչպես ամբողջությամբ, այնպես էլ առանձին-առանձին: Սա շատ ավելի էժան և հարմար է, քան Չինաստանում գրասենյակ և աշխատողներ պահելը:

Մեր աշխատողների բարձր որակավորումը, Չինաստանի տարածքում հաստատված գործընկերային հարաբերություններն արտադրող ընկերությունների և խոշոր լոգիստիկ ընկերությունների հետ թույլ են տալիս տրամադրել ամենաբարձր որակի ծառայություններ:Չինաստանից մատակարարումներից առաջ մեր մասնագետները հաճախորդի հետ միասին ձևավորում են ապրանքի բնութագրիչ հատկանիշները հստակ սահմանող տեխնիկական առաջադրանքը, որի համաձայն էլ իրականացվում է ապրանքի որոնումը: Մեր ընկերության որակավորված մասնագետները տիրապետում են ռուսերեն, անգլերեն և չինարեն լեզուներին և իրականացնում են շուկայի մանրամասն ուսումնասիրություն, ինչպես նաև վերլուծում են արտադրական և վիճակագրական տվյալների բազաները, հավաքագրում են տվյալներ որակյալ ապրանքներ արտադրողների և մատակարարների վերաբերյալ: